# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ԳՀԱՊՁԲ-21-7/2-1

ք. Երևան 04.02.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մոսէնքո» ՍՊԸ -ը, ի դեմս տնօրեն Կ. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 6440484 (վեց միլիոն չորս հարյուր քառասուն հազար չորս հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[20]

8.16 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՀՈՒ թիկունքի վարչությունը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Մոսէքսո» ՍՊԸ
ՀՀ, ք Երևան Նար-Դոս 75
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022417711001
ՀՎՀՀ 04214892
Տնօրեն

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**Հավելված N 1**
**N ԳՀԱՊՁԲ-21-7/2-1 պայմանագրի**

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Գնման առարկայի | | |
|---|---|---|
| Հ/հ | անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3. | Շարժիչի յուղեր /15W50/ | Միջազգ.ստանդ.SAE-15W50 API-SJ/CF<br>Նախատեսված բենզինային և դիզելային շարժիչների համար<br>- կինեմատիկ մածուցիկությունը 40°C դեպքում՝ 150-160մմ²/վ,<br>- կինեմատիկ մածուցիկությունը 100°C դեպքում՝ 16,3-21,9մմ²/վ,<br>- մածուցիկության ինդեքսը՝ ոչ պակաս 147,<br>- բռնկման ջերմաստիճանը՝ 230°C-ից ոչ ցածր<br>- սառեցման ջերմաստիճանը՝ -30°C-ից ոչ բարձր,<br>- հիմնային թիվը ոչ պակաս 7 մգ KOH/գ,<br>- խտությունը 20°C դեպքում 0.870 գ/սմ³-ց ոչ պակաս:<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳOUS 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 220 լ-ոց տարաներով |
| 9. | Էլեկտրամեկուսիչ յուղեր /Տրանսֆորմատորային ԳԿ/ | ՏՊ 38.101-1025-85<br>Տրանսֆորմատորների լցավորման համար:<br>- կինեմատիկ մածուցիկությունը<br>50°C դեպքում՝ 9մմ²/վ-ից ոչ ավել<br>-30 °C դեպքում՝ 1200 մմ²/վ-ից ոչ ավել<br>- բռնկման ջերմաստիճանը փակ տիգելում՝ 135°C -ից ոչ ցածր,<br>- սառեցման ջերմաստիճանը՝ -45°C -ից ոչ բարձր,<br>- պղնձե թիթեղի կորոզիան՝ դիմանում է,<br>- թթվային թիվ մգ KOH/գ ոչ ավել՝ 0,01,<br>- մեխանիկական խառնուրդների զանգվածային բաժինը ՝ բացակա,<br>- ըստ ՑՆՏ կոլորիմետրի գույնը ոչ ավել՝ 1 միավոր:<br>- խտությունը 20°C դեպքում՝ 895կգ/մ³-ոչ ավելի<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳOUS 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 10 լ-ոց տարաներով |
| 10. | Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /ՄԳՏ/ | ՏՊ 38.1011103-87<br>Անվավոր և թրթուրավոր մեքենաների հիդրոմեխանիկական /ավտոմատ/ հաղորդման տուփերի համար<br>- կինեմատիկ մածուցիկությունը 100°C դեպքում՝ 6 - 7 մմ²/վ<br>- բռնկման ջերմաստիճանը՝ 160°C -ից ոչ ցածր,<br>- սառեցման ջերմաստիճանը՝ -55°C -ից ոչ բարձր,<br>- մեխանիկական խառնուրդների զանգվածային բաժինը՝ 0.01%-ից ոչ ավել<br>- մածուցիկության ինդեքսը՝ ոչ պակաս 175,<br>- ջերմաօկսիդիչ կայունություն ոչ ավել ՝ 0,07%<br>- ջրի պարունակությունը՝ բացակա,<br>- կորոզիայի փորձարկում՝ ոչ ավել 2ա բալ<br>- խտությունը 20°C դեպքում՝ ոչ պակաս 850կգ/մ³-ից,<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳOUS 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 50 լ-ոց տարաներով |
| 11. | Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /HVLP-46/ | ՏՊ 0253-056-15301184-2015<br>- կինեմատիկ մածուցիկությունը 40°C ՝ 41.4 – 50.6 մմ²/վ<br>- մածուցիկության ինդեքսը՝ 140-ից ոչ պակաս<br>- ըստ ՑՆՏ կոլորիմետրի գույնը ոչ ավել՝ 3 միավոր<br>- ջրի զանգվածային բաժինը ՝ հետքեր,<br>- մեխանիկական խառնուրդների զանգվածային բաժինը ՝ բացակա<br>- թթվային թիվը ՝ ոչ ավել 0.8 մգKOH/գ,<br>- բռնկման ջերմաստիճանը՝ 220°C -ից ոչ ցածր<br>- սառեցման ջերմաստիճանը՝ -40°C -ից ոչ բարձր<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳOUS 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 220 լ-ոց տարաներով |

| | | |
|---|---|---|
| 12. | Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /EP-2/ | ՏՊ Ու 23.2-36451680-172:2011<br>- ըստ NLGI դասակարգման՝ 2, ըստ DIN 51502 դասակարգման՝ KP-2K-30<br>- կաթիլընկման ջերմաստիճանը՝ 170$^0$C -ից ոչ ցածր<br>- պենետրացիան 25$^0$C դեպքում՝ 260-300 մմ/10,<br>- մեխանիկական մասնիկների մասնաբաժինը՝ ոչ ավել 0.025%<br>- ջրի մասնաբաժինը՝ հետքեր<br>- կորոզիայի փորձարկում 100$^0$C 3 ժամ պողպատե և պղինձե թիթեղների վրա՝ դիմանում է,<br>- ազատ հիմքերի մասնաբաժինը՝ ոչ ավել 0.15%<br>- կոլոիդային կայունությունը՝ ոչ ավել 15%<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳOUS 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 220 լ-ոց տարաներով |
| 14. | Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /Առանցքակալային յուղ/ | ՏՊ38.301-04-21-96<br>Բարձր արդյունավետությամբ նավթային յուղ, կիրառվում է մեխանիկական սարքավորումների և էլեկտրոշարժիչների շարժիչաառանցքային շփման հանգույցներում<br>- կինեմատիկ մածուցիկությունը՝ 50$^0$C դեպքում՝ 28 մմ$^2$/ վ-ից ոչ ցածր,<br>- բռնկման ջերմաստիճանը՝ 125$^0$C -ից ոչ ցածր,<br>- սառեցման ջերմաստիճանը՝ -35$^0$C -ից ոչ բարձր,<br>- ջրի զանգվածային բաժինը՝ 0.4%-ից ոչ ավել,<br>- ՋՀԹ-ի պարունակությունը՝ բացակա,<br>- մեխանիկական խառնուրդների զանգվածային բաժինը՝ 0.07%-ից ոչ ավել, չօգտագործված, հրավտանգ:<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳOUS 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 20 լ-ոց տարաներով |
| 15. | Քսուքներ /Վնիի ՆՊ-282/ | ՏՊ 38.1011261-89<br>- միատար քսուք՝ սպիտակից մինչև բաց մոխրագույն,<br>- գոլորշիացում 150$^0$C դեպքում՝ ոչ ավել 5%,<br>- էֆեկտիվ մածուծիկությունը 50$^0$C դեպքում՝ ոչ պակաս 1,6Պա.<br>- 0.075մմ-ից ավել տրամագծով մեխանիկական մասնիկների պարունակությունը՝ բացակա,<br>- մետաղների վրա կոռոզիոն ազդեցությունը՝ դիմանում է<br>- կոլոիդային կայունությունը՝ ոչ ավել 5%<br>- ամրության սահմանը 50$^0$C դեպքում՝ 200-700 Պա<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳOUS 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 5կգ-ոց տարաներով |
| 16. | Քսուքներ /Վնիի ՆՊ-286Մ/ | ՏՊ 38.101950-00<br>- միատար քսուք՝ մոխրագույնից մինչև բաց շագանակագույն,<br>- կաթիլընկման ջերմաստիճանը՝ 180$^0$C -ից ոչ ցածր,<br>- ամրության սահմանը 50$^0$C դեպքում՝ 200-350 Պա<br>- կոլոիդային կայունությունը՝ ոչ ավել 22%<br>- ջրի պարունակությունը ՝ բացակա<br>- մեխանիկական մասնիկների պարունակությունը՝ բացակա<br>- մետաղների վրա կոռոզիոն ազդեցությունը՝ դիմանում է<br>- գոլորշիացում 150$^0$C դեպքում՝ ոչ ավել 5%,<br>- ազատ հիմքերի մասնաբաժինը՝ ոչ ավել 0.1%<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳOUS 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 5կգ-ոց տարաներով: |
| 17. | Քսուքներ /Մածուկ ԱԼԿՄ-1/ | ՏՊ 6-10-1933-84<br>Շահագործման ընթացում մինչև 150$^0$C տաքացող կամ կարճաժամկետ (2-3 ժամ) 200-250$^0$C տաքացող մետաղյա դետալների միացման մասերի պաշտպանության համար<br>- մածուկի պայմանական մածուցիկությունը՝ քսիլոլով հետ 70:30 հարաբերությամբ խառնուրդի 20±5 $^0$C ջերմաստիճանում՝ 24-40 վրկ,<br>- չցնդող նյութերի մասնաբաժինը՝ 99±1%,<br>- թթվային թիվը՝ ոչ ավել 7.5 մգKOH/գ:<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳOUS 1510-84-ի: Արտադրող |

| | | |
|---|---|---|
| | | գործարանի տարողությունում՝ մինչև 5կգ-ոց տարաներով: |
| 18. | Քսուքներ /Քսուք ԱՏԼԱՆՏԱ (Վնիի ՆՊ-254)/ | ՏՊ 38.1011048-85<br>- միատարր փափուկ ՝ մուգ շագանակագույն քսուք մանուշակագույն նրբերանգով,<br>- ամրության սահմանը 50°C դեպքում՝ 100-250 Պա<br>- մածուցիկությունը -50°C դեպքում՝ ոչ ավել 750Պա.վրկ<br>- կոլոիդային կայունությունը՝ ոչ ավել 35%,<br>- կաթիլընկման ջերմաստիճանը՝ 165°C -ից ոչ ցածր,<br>- ազատ հիմքերի մասնաբաժինը՝ ոչ ավել 0.25%,<br>- գոլորշիացում 1 ժամում 150°C-ի դեպքում՝ ոչ ավել 5%,<br>- մետաղների վրա կոռոզիոն ազդեցությունը՝ դիմանում է<br>- ջրի պարունակությունը ՝ բացակա<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 5կգ-ոց տարաներով: |
| 19. | Քսուքներ /Քսուք ՍԱՊՖԻՐ (Վնիի ՆՊ-261)/ | ՏՊ 38.1011051-87<br>- հարթ քսուք՝ առանց գնդիկների՝ կապտամոխրագույնից մինչև սև,թույլատրվում է կանաչավուն երանգ.<br>- կաթիլընկման ջերմաստիճանը՝ 250°C -ից ոչ ցածր,<br>- մածուցիկությունը -40°C դեպքում՝ ոչ ավել 3000Պա.վրկ<br>- գոլորշիացում 1 ժամում 150°C-ի դեպքում՝ ոչ ավել 3%,<br>- կոլոիդային կայունությունը՝ ոչ ավել 10%,<br>- ամրության սահմանը 50°C դեպքում՝ 300-800 Պա<br>- մետաղների վրա կոռոզիոն ազդեցությունը՝ դիմանում է<br>- ջրի պարունակությունը ՝ բացակա<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 5կգ-ոց տարաներով: |
| 20 | Հակակոռոզիոն յուղեր /Ակոռ-1/ | ԳՕՍ 15171-78<br>Տարբեր տեսակի միներալ յուղերի պաշտպանիչ (կոնսերվացիոն) հատկությունների լավացման համար հավելանյութ:<br>- յուղային հեղուկ մուգ շականակագույնից մինչը սև, բարակ շերտում թափանցիկ,<br>- կինեմատիկ մածուցիկությունը՝100°C դեպքում՝ 65 մմ²/վ-ից ոչ ավել,<br>- հիմնային թիվը ոչ պակաս 38 մգKOH/գ,<br>- ջրի առկայությունը՝ բացակա,<br>- մոխրայնություն 3.6-5.0%,<br>- պաշտպանիչ հատկանիշ՝ դիմանում է,<br>- հիմնային թիվը ոչ պակաս՝ 38 մգ KOH/գ,<br>- մեխանիկական մասնիկների առկայությունը ՝ ոչ ավել 0.08%:<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 20 լ-ոց տարաներով |
| 21. | Քսուքներ /ԱՄՍ-3/ | ԳՕՍ 2712-75<br>- միատարր քսուք մուգ գույնի,<br>- ջրի առկայությունը՝ բացակա,<br>- մեխանիկական մասնիկների առկայությունը՝ բացակա,<br>- ՋՀԹ-ի պարունակությունը՝ բացակա,<br>- պենետրացիան 25°C՝ 200-250<br>- պաշտպանիչ հատկությունը 24ժ՝ դիմանում է,<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 5 լ-ոց տարաներով |

**Ծանոթություն՝** -

1.Եթե մրցույթի ժամանակ ներկայացվում է ՏՊ-ով ապրանք, ապա պետք է ներկայացվի նաև նշված ՏՊ-ի կրկնօրինակը:
2. Ապրանքների ընդունումն իրականացնել արտադրող գարծարանի որակի անձնագրի առկայության դեպքում:
3. Ապրանքների մատակարարման պահին պահպանման երաշխիքային ժամկետի մնացորդը ոչ պակաս 80%:
4. Մատակարարման վայրը՝ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Կարմիր բանակայինների փողոց
5. Եթե ապրանքն առբերող տրանսպորտային միջոցների վրա առկա են տեսադիտարկման և տեղորոշման տարրեր, ապա ՎՔՆ բազաներ մուտք գործելիս դրանք պետք է անջատված լինեն, իսկ տրանսպորտային միջոցների վարորդները պետք է լինեն ՀՀ քաղաքացիներ:

6. Բացասական եզրակացության դեպքում, համաձայն ՀՀ ՋՈՒ ԳՇ պետի 30.08.2019թ. No1042/ԳՇ հրամանի, մատակարարի կողմից, բացի պայմանագրով նախատեսված տույժ-տուգանքներից, պետք է փոխհատուցվեն նաև հետազոտությունների և փորձարկումների համար իրականացված ծախսեր՝ ըստ փաստացի ծախսերի հաշվետվությունների՝ հիմք ընդունելով ՀՀ ՋՈՒ ԳՇ պետի կողմից հաստատված՝ հետազոտությունների և փորձարկումների վրա ծախսվող նվազագույն դրամական միջոցների ցանկով սահմանված գումարները. մասնավորապես. յուղերի համար (3-րդից 14-րդ և 20-րդ չափաբաժիններ)՝ 8500 դրամ, քսուքների և հատուկ հեղուկների համար (15-րդից 19-րդ և 21-րդ չափաբաժիններ)՝ 8000 դրամ:

7. Յուրաքանչյուր տող դիտարկել որպես առանձին չափաբաժին:

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Գնման առարկայի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | անվանումը | չ/մ | քանակը | միավորի գինը (ՀՀ դրամ) | ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | |
| 3 | Շարժիչի յուղեր /15W50/ | կգ | 200 | 4399.2 | 879840 | Ապրանքի մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման> կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը պարբերության պահանջները: |
| 9 | Էլեկտրամեկուսիչ յուղեր /Տրանսֆորմատորային ԳԿ/ | կգ | 250 | 1380 | 345000 | |
| 10 | Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /ՄԳՏ/ | կգ | 400 | 1614 | 645600 | |
| 11 | Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /HVLP-46/ | կգ | 300 | 1464 | 439200 | |
| 12 | Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /EP-2/ | կգ | 100 | 2132.4 | 213240 | |
| 14 | Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /Առանցքակալային յուղ/ | կգ | 100 | 1476 | 147600 | |
| 15 | Քսուքներ /Վնիի ՆՊ-282/ | կգ | 3 | 214461.6 | 643384,8 | |
| 16 | Քսուքներ /Վնիի ՆՊ-286Մ/ | կգ | 11 | 18636 | 204996 | |
| 17 | Քսուքներ /Մածուկ ԱԼԿՄ-1/ | կգ | 10 | 40452 | 404520 | |
| 18 | Քսուքներ /Քսուք ԱՏԼԱՆՏԱ (Վնիի ՆՊ-254)/ | կգ | 36 | 38310 | 1379160 | |
| 19 | Քսուքներ /Քսուք ՍԱՊՖԻՐ (Վնիի ՆՊ-261)/ | կգ | 2 | 27579.6 | 55159,2 | |
| 20 | Հակակոռոզիոն յուղեր /Ակոռ-1/ | կգ | 500 | 1896 | 948000 | |
| 21 | Քսուքներ /ԱՄՄ-3/ | կգ | 40 | 3369.6 | 134784 | |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Մոսէսքո» ՍՊԸ
տնօրեն

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**Հավելված N 2**
**N ԳՀԱՊՁԲ-21-7/2-1 պայմանագրի**

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | | |
|---|---|---|---|
| ՀՀ/h | անվանումը | CPV կոդը | |
| 3 | Շարժիչի յուղեր /15W50/ | 09211110/520 | վճարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում: |
| 9 | Էլեկտրամեկուսիչ յուղեր /Տրանսֆորմատորային ԳԿ/ | 09211641/501 | |
| 10 | Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /ՄԳՏ/ | 09211660/518 | |
| 11 | Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /HVLP-46/ | 09211660/519 | |
| 12 | Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /EP-2/ | 09211660/520 | |
| 14 | Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /Առանցքակալային յուղ/ | 09211660/522 | |
| 15 | Քսուքներ /Վնիի ՆՊ-282/ | 24951100/530 | |
| 16 | Քսուքներ /Վնիի ՆՊ-286Մ/ | 24951100/536 | |
| 17 | Քսուքներ /Մածուկ ԱԼԿՄ-1/ | 24951100/532 | |
| 18 | Քսուքներ /Քսուք ԱՏԼԱՆՏԱ (Վնիի ՆՊ-254)/ | 24951100/533 | |
| 19 | Քսուքներ /Քսուք ՍԱՊՖԻՐ (Վնիի ՆՊ-261)/ | 24951100/534 | |
| 20 | Հակակոռոզիոն յուղեր /Ակոռ-1/ | 09211631/506 | |
| 21 | Քսուքներ /ԱՄՍ-3/ | 24951100/535 | |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Մոսէքո» ՍՊԸ
տնօրեն

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**Հավելված N 3**
**N ԳՀԱՊՁԲ-21-7/2-1 պայմանագրի**

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**Հավելված N 3.1**
**N ԳՀԱՊՁԲ-21-7/2-1 պայմանագրի**

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն